ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

10 ապրիլի 2019 թվականի N 74-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԻՍԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով և 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թ.-ի տարեկան աշխատանքային ծրագրը՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնակատար Տ. Իվանյանին՝

1) սույն թվականի ապրիլի 15-ից 30-ը, Գորիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում, կազմակերպել աուդիտորական ուսումնասիրությունների իրականացում.

2) աուդիտորական ուսումնասիրությունների ավարտից հետո, հինգօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. Գորիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում նախատեսված աուդիտորական ուսումնասիրություններում ներգրավել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ Արամ Շահնազարյանին և առաջատար մասնագետ Վահրամ Արզումանյանին՝ որպես փորձագետներ:

3. Ա. Շահնազարյանին և Վ. Արզումանյանին՝ աուդիտորական ուսումնասիրությունների ավարտից հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել փորձագիտական եզրակացություն (հաշվետվություն) կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

11 04 2019

X

VERIFIED OCSP 11.04.2019 10:50:11 GMT+4

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ